Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ԹՂԹԱՌ ԱՆՁՐԵՒԱԾԻՆ

ՅՈՐԻՆԵԱԼ ՅՈՒՄԵՄՆԷ ԿՐՕՆԱՍԻՐԷ·

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԻՆԳ-
ԵՐՈՐԴԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ։

ԵՒ 'Ի ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ
ՎԱՆԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝
ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ ։

'Ի ԿԱԼԿԱԹԱ

Ց'ԱՐՃԻՒ ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ՎԻՃԷՆԵԱՆ·

1851·

ՊԵՏ. ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ Բ. ԶՔՋՅՆԵԱՆ ի Թիւ______

ԱԶԴ

Որ 'ի սկզբան անդր ասացն՝ և եղեն · հրամայեացն՝ և հաստատեցան երկինք · ասաց և 'ի մարդեղութեան իւրում՝ որ խնդրէ առնու , որ հայցէ՝ գտանէ , և այլն · որով պարզապէս իմանի՝ առանց խնդրելոյ՝ ոչ ումեք բաշխի շնորհս ողորմութեան յԱստուծոյ · և որ խնդրէ հաւատով՝ անպատրակոյս ունի գտանել · որոյ փորձն առին որք յուսով սիրով և հաւատով 'ի Տէր դիմեցին · ըստ յաճախ օրինակի և ապացուցութեան սուրբ Գրոց ։

Ցայս իմաստ ուսան մարդիկ յո՛ և իցէ կարօտութիւնս յօգնականութիւն առ Տէր կարդալ բոլորով սրտիւ , և գտանել ցանկալի նպաստին 'ի նմանէ · ուստի և վասն երաշտութեան որ առիթ սովու և ապականութեան երկրի մակարդի · թէ և զանազան ընթերցուածք և մաղթանք առ Տէր կան · սակայն աղօթք մի ուղղակի առ այն՝ չկայր յօրինեալ 'ի ձեռս հասարակութեան՝ առ 'ի կատարել նովաւ զպարտիս 'ի ժամու հարկաւորութեան · որպէս յաւուրս յայսմիկ էին 'ի ձեռս մեր ձեռագիր օրինակ մի՝ յօրինեալ յումեմնէ կրօնաւորէ 'ի Կալկաթա · որում արժան դատեցի տպագրել 'ի պէտս աղօթաւոր հասարակութեան Պատուելի Ազգիս · առ որ յուսամ շահաւորել բանիւս 'ի մասին առաքինութեան , ոչ ինչ անմասն 'ի վարձուց բարեաց Ճայից · որպէս և դիմողացն այնու առ Աստուած ։

Մնամ Ցարգանօք՝

Որպէս Ձեր պատրաստական

'ի ԿԱԼԿԱԹԱ , Ամենախոնարհ Ծառայ՝

23 , *Դեկտեմբերի* , 1851 · ՊՕՂՈՍ ՎԻՋԷՆՆԵԱՆ ·

ԱՂԵՐՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ՝

ՎԱՍՆ ՊԱՐԳԵՒԵԼՈՅ ԱՆՁՐԵՒ ԵՐԿՐԻ։

ԱՄԵՆԱԿԱԼ Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած խաղաղութեան՝ և հաստիչ ամենայն եղականաց. Հայր խնամող կեցուցիչ և դարմանիչ բնաւին էակաց. որ ամենառատ գթութեամբ քով եդեր ուխտ խաղաղութեան ընդ Իսրայէլի սրբոյ քո. և ընդ Դաւթի ծառայի քում. տալ նոցա շուրջ զլերամբ ցօղ կենդանարար շնորհի քո և ողորմութեան ՚ի սնունդ և ՚ի զարգացումն երկրի՝ և ՚ի դալարութիւն համայն ստեղծուածոց քոց. որպէս նախախնամական սիրով քով հաճեցար ասել, տաց ձեզ անձրև՝ և եղիցին անձրևք օրհնութեան. և ծառք յագարակի տացեն զպտուղս իւրեանց՝ և երկիր տացէ ըզզօրութիւն իւր. և բնակեսցին յերկրի մար-

դիկք յուսով խաղաղութեան . և ո՛չ ևս վտանեսցին 'ի սովու 'ի վերայ երկրի . և դուք խաշինք իմ՝ ոչխարք արօտի իմո՛յ մարդիկ էք . և ես Տէր Աստուած ձեր :

Արդ՝ ո՛վ Ամենահայեաց աղբիւր անմահութեան և Աստուած կենդանարար Հոգւոյ և մարմնոյ մերոյ , որ մարդասիրութեամբ քով հաճեցար մխիթարել և զօրացուցանել զթօշնեալ և զթարշամեալ մեռելոտի բնութիւն ազգի մարդկան՝ հաւատով կարդացողաց զքեզ 'ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր շրթանց . թողլով և այլ ոչ յիշելով զանցեալ չարիս նոցին որք գործեցան մարդկային տկարութեամբ . արա՛ այժմ ընդ նոսին և զմեզ արժանի քում անսպառ ողորմութեան , նայեա՛ց 'ի մեզ քաղցրութեամբ՝ և թո՛ղ մեզ այժմ զչարիս մեր . և տո՛ւր մեզ տեղի ընդունելութեան աղօթից մերոց առաջի աննխազ և անկարօտ Աստուածութեան քում ընդ երջանկաց վկայից՝ որք արժանի եղեն անձեռանալի փառաց խորանին լուսոյ վերնայարկի . խոնարհեցո՛ զունկն քո 'ի լուր աղօթից և խնդրուածոց մերոց՝ յաւուրս

յայսմիկ երաշտութեան , յորում ըստ մարգարէին՝ ցիռք 'ի դաշտս մերձ են ծծել զօդս իբրև զվիշապս՝ և 'ի չգոյէ խոտոյ սորիլ աչք նոցա , եթէ մեղք մեր հակառակ կացին մեզ՝ դու արա վասն անուանդ քո , զի բազում են մեղք մեր առաջի քո՝ քեզ մեղաք ․ զի 'ի սակաւութենէ անձրևաց և յերկիւղէ սովու տագնապեալ սարսիմք՝ և յահէ տուայտանաց քաղլին հոգիք մեր , առ որ արտասուալից աչօք անկեալ յերեսս՝ զգարշապարիդ հետս համբուրելով աղաչեմք , վասն հեղման սուրբ արեան միածնի Որդւոյ քո՝ և Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ․ մի հեռի առներ զողորմութիւն քո 'ի մէնջ , և մի ըստ մեղաց մերոց հատուցաներ մեզ ․ զի մեք կաւ՝ և դու ստեղծիչ մեր ․ մեք տկար արարած՝ և դու Ամենազօր Արարիչ մեր ․ մեք հանապազօր յանցաւոր՝ և դու ներող յանցանաց մերոց , որպէս զարմանալի օրինակաւ ցուցեր երբեմն առ «Նինուէացիս՝ զանչափ ներողութեանդ քո զչափ ։

Ով սարսափելի գթութիւն և սքանչելի ներողութիւն , ներեա յանցանաց մերոց ․

զի գիտեմք չի՛ք ոք որ տեղայցէ մեզ, և ոչ եր-
կինք տացեն զլրութիւն իւրեանց առանցհրա
մանի քաղցր ակնարկութեան քո, զի դու ես
որ առնես զամենայն ամենայնի, քոյէ երկիր
լրիւ իւրով, և դու տաս հրաման շրջանաց եր-
կրի և տարերաց յարթնութիւն և յարատե-
ւութիւն արդեանց կենդանութեան արարա-
ծոցս, որպէս յաւուրս Աքաաբու 'ի ձեռն Ե-
ղիայի՝ որ 'ի գլուխ լերինն Կարմելայ ցուցեր
զսքանչելիդ քո զգթութիւն, տալով ամ-
պեղէն թաթառն 'ի ջուր, և ոռոգանելով
զծարաւս երկրի, 'ի զովացումն պասքեալ
և թառամեալ բնութեան մարդկան և ամե-
նայն կենդանեաց, փրկելով և զաշխարհ
յապականութենէ սովուն դժնդակութեան ։
Իսկ արդ՝ որ զմեծն անձառելապէս շնորհե-
ցեր՝ զիա՛րդ զփոքրն անխայեսցես 'ի մէնջ,
ընկա՛լ զաղօթս և զերկրպագութիւնս մեր՝
որպէս զբուրումն անուշահոտ խնկոց խորա-
նիդ վկայութեան առ քաւութիւն մեղաց,
և որպէս զողջակէզն Նոյի 'ի վերայ սեղանոյ
հոտոտեալ 'ի հոտ ընդունելութեան հաճոյից
բարերար կամաց քոց, և զմեզ զամենեսեան

քաղցրալուր բանիւ Աստուածաշունչ պատգամացդ ուսուցեր կարդալ միշտ առ քեզ՝ ըստ մարգարէին, թէ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ արարեր զանձն իմ. ուրախ արա և մեզ Տէր յարարածս քո, որպէս և 'ի նոյն խնամ արարչական սիրոյ քո առ ազգս մարդկան՝ ածեալ զմտաւ հաստատեցեր յասելդ, ոչ ես յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան, զի միտք մարդկան հաստատեալ են 'ի խնամս չարին 'ի մանկութենէ իւրմէ. և յաւել թէ՝ Ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ և ընդ զաւակի ձերում յետ ձեր, զաղեղն իմ եդից յամպս՝ և եղիցի 'ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս՝ և ընդ ամենայն երկիր. զի սերմն՝ և հունձք. ցուրտ՝ և տօթ, ամառն՝ և գարուն մի դադարեսցեն ։

Եւ արդ՝ դու Հայր մեր և Աստուած ողորմութեանց՝ որ վասն անարժանութեան արարածոց քոց՝ որք իսկզբանէ անտի յօժարամիտ յերկրաքարշ հեշտասիրութիւնս՝ և յամր 'ի կատարումն պատուիրանաց քոց, այսչափ անհուն շնորհս բարեաց հեղեր և հե-

դուլ միշտ պատրաստ ես, ողորմեա՛ այժմ և մեզ յուսով դիմողացս առ քեզ, թո՛ղ զպարտիս մեր՝ առանց նայելոյ զպատուիրանազանցութիւն մեր առ միմեանս թողլոյ զպարտիս. ընկա՛լ և զպաղատանս մեր և զհեծութիւնս՝ որք 'ի խորոց սրտի առ քեզ աղաղակի. Զուարթացո՛ զմեզ թարշամելոցս ցօղով ողորմութեան քո, և որպէս շնորհես մեզ միշտ զպիտոյս անձանց մերոց, պարգևեա՛ և այժմ 'ի հարկաւորութեան մերում զառատապարգև զցօղդ անձրևաց. որպէս զի պարարտացեալ երկրի և ուռճացեալ բուսականաց. արդասեօք բերոց տացեն մեզ մխիթարութիւն և սփոփանս կենդանութեան, որով և մեք կեցցուք և կարդասցուք զանուն քո միշտ. զի դու ես բեղմնաւորիչ պտղոց ծառոց, և բերոց անդոց 'ի սնունդս ձեռակերտաց քոց, այնպէս և դու ես՝ որ մարախաւ թըրթուրով և ջորեկաւ տաս լափել յերկրէ զամենայն բերս տարեկանաց. և եղեմամբ սառնամանեօք ապականեալ երկիր, սովով և սրով և մահուամբ պատժես զանբարշտացեալսըն մեղօք, վասնորոյ և մեք դարձեալ առ

քեզ պաղատիմք, մի՛ մեզ Տէր՝ մի՛ մեզ, այլ անուան քում տո՛ւր զփառս վասն ողորմութեան և ճշմարտութեան քո. տո՛ւր մեզ 'ի տարւոջս յայսմիկ և 'ի ժամուս անջրդի ծառայութեանս երկրի՝ անձրև յորդառատ 'ի պաշտպանութիւն մեր, ընդդէմ երեսաց սովու և ապագայ վտանգի տուայտանաց. Կազդուրեա՛ և մեզ յամենայն փորձութեանց չարին, տալով մեզ սիրտ սուրբ և հոգի ուղիղ՝ որպէս զի կեցեալ յայսմ աղջաւոր կենցաղոյս, ազատ 'ի հրապուրանաց հակառակասիրին. և վայելեալ զանսպառ բարիս ողորմութեան քում. մարթասցուք գործքով բարեաց, և որպիսիք հնձոց առաքինութեան ժամանել 'ի կէտ երանաւէտ կոչման, և քաւութեան պտղով անձառ երանեցեալդ-լուսոյ, վայելել զանանցն բարութիւն. Որ և քեզ միայնոյ Թագաւորիդ անմահի Հօր՝ ընդ Որդւոյ՝ և ընդ սրբոյ Հոգւոյն փառք՝ և երկրպագութիւն այժմ և յաւիտեան. Ամէն.

ՎԵՐՋ.

ԳԵՏ. ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

Թ. Ա.
№ 6779